

Հ Ա Խ Ա Տ Ք

ԼԵՌՆԵՐԻ ԵՒ ՔԵՐԵՐԻ ՊԱՋՏԱՄՈՒՆՔ

Լեռների պաշտամունք. Լեռների պաշտաման վերաբերեալ ոչինչ չկայ Լուսում, չնայելով որ ոչ մի փոքր իշատէ նշանաւոր լեառ չկայ, որ իւր գագաթին չկրէր մի ուխտատեղի, միջանի սուրբ համարուած ծառեր, աղբիւր և այլն:

Քարերի պաշտամունք. Լուսում քարերի պաշտամունքից շատ քիչ բան է մնացել: Երզուիի մօտ գտնուում է «Օձի պորտը», որ երկու ահագին քարաշերտ է. ժողովուրդը դրանց համարում է քարացած վիշապներ—օձեր, և նրանց առաջ մոմ վառելով բժշկութիւն հայցում ¹⁾:

Քացի սրանից Օձունի և Ս. Նշանի միջև գտնուող Ս. Կիրակի ուխտատեղում կայ մի կլոր, սև քար, որի վրայ ոչ մի խաչ չի քանդակուած: Սա կոչուում է «Դոզի խաչ» և պաշտուում է իբրև ջերմ (զոյ) հիւանդութեան բուժիչ:

Ջուլափէրումն էլ մի ահագին ժայռ կայ, որի գագաթին մի ժամանակ բերդ է կառուցուած եղել: Եյս ժայռի մէջ կան երեք ծակեր, որոնց միջով ամուլ կանայք երեքական անդամ անց են կենում, որպէսզի որդի ունենան:

Հաղբատի արևելահարաւային կողմում, առուակի ափին մի քարքարոտ տեղ կայ, որ Քասի արտ է կոչուում: Եյս տեղը ոչ որ չի վարում, որովհետև «վարողը բորոտութիւն է ստանում»:

¹⁾ Տես այս մասին Օձան Օձնեցու մասին եղած աւանդութիւնները և ջրի պաշտամունքը: